

հրաժարականը անձամբ յանձնել է Ներսիսեան զարդի հոգաբարձութեան նախագահ սրբազան առաջնորդին:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԻ ՔԱՆԻ ԳՅՈՐ ՖՐԻԴՐԻԽ ԿՍՏՈՐԻ ԿԵՆՏՐՈՆ

Հանգուցեալ Ֆրիդրիխ III կայսրը շատ գեղեցիկ տղամարդ էր: Այնքան բարձրահասակ չէր լինելով, որքան իր հայրը, Վիլհելմ կայսրը, նա դարձեալ միջին հասակից բարձր էր: Երկար խարտեալ միջուկ, խոր և արտայայտիչ կապույտ աչքեր, դեմքի մեղմ գծագրութիւն,—այդ բոլորը դիւրեւ յայտնաբերուած էր գործում ոչ թէ միայն կանանց վրա, բայց և տղամարդկանց վրա: Հանգուցեալը ներկայացնում էր իր արտաքինով կատարեալ գերմանական տիպ, ինչպէս որ մինչ անհասարակ սովոր ենք մեզ երևակայել հին, սկզբնական գերմանական ցեղին պատկանող տղամարդկանց: Հանգուցեալը իր արտաքինով դիւրեւ յայտնաբերուած էր գործում և ամբողջ վրա: Նա անհասարակ, դեռ թագաժառանգ եղած ժամանակ, մեծ ժողովրդականութիւն էր վայելում և ոչ թէ միայն հիւսիսային Գերմանիայում, Պրուսիայում, բայց և հարավային գերմանացիների մէջ, որոնք անհասարակ, ինչպէս յայտնի է, չափ էլ չեն սիրում սառն, եսական և կոշտ պրուսիացիներին:

Պրուսիայի պետական մարդիկ այդ շատ լաւ էին հասկացել և երբ ծաղից ֆրանս-գերմանական 1870—1871 թւերի պատերազմը, թագաժառանգ Ֆրիդրիխ նշանակեցաւ հրամանատար հարաւային գերմանացիների զորքերի: Նա դարձաւ այն կապող օղակը, որը իր անձնատրուութեամբ ներշնչելով հարաւային գերմանացիների մէջ համակրութիւն դէպի հիւսիսայինները, միացրեց բնաւորութեամբ այդ երկու տարբեր տարրերը ընդհանուր ազգային գործի մէջ:

Երբ պատերազմի ժամանակ, Գրալըօտի ճակատամարտից յետոյ, հաւաքելով իր զօրքը, թագաժառանգը ջերմ կերպով շնորհակալութիւն յայտնեց զինուորական իրանց ցոյց տուած քաջութեան համար, բաւարարեց հասարակ զինուորականից մէկը, դուրս գալով զօրքերի շարքերից, բացակայեց: Բարձրութիւն, դուր ինչ էր կարծում, եթէ 1866 թվին, երբ մինչ քաղաքացիներս աւատորացիների հետ միասին կռոււ էինք պրուսիացիների դէմ, դուք մեր հրամանատար լինէիք, պատերազմը ուրիշ ընթացք կը ստանար և մինչ լաւ կը ջարդէինք այդ անիծված պրուսիացիներին:

Այսու և Ֆրիդրիխը իր ամբողջ կեանքում չէր մոռանում այդ քաղաքացու ասածը և երբ յիշում էր այդ անցքը, միշտ ծիծաղում էր:

Հանգուցեալ մանկութիւնից սկսած շատ լաւ կրթութիւն էր ստացել թէ տանը և թէ դպրոցում: Վերջապէս Բօննի համալսարանում իր ուսումը աւարտելուց յետոյ, նա իրան նուիրեց աւելի ընթերցանութեանն ու գրական պարապմունքներին, քան թէ քաղաքականութեանը: Նրա մէջ սաստիկ զարգացած էր սէր դէպի գիտութիւնը և գեղարուեստը, և այդ սէրը աւելի էլ զարգացնում էր նրա մէջ նրա ամուսինը, Վիկտորիան իշխանուհին, որը ինքն շատ զարգացած, խելացի, կրթված կին էր: Վիկտորիա իշխանուհին, դեռ քսան տարեկան հասակում իր մօր, անգլիական Վիկտորիա թագուհու հետ, գրադպրութիւն ունէր քաղաքական ամենապուրջ և զբաղւած լուծելի խնդիրների մասին: Վիկտորիա իշխանուհին ահագին և մի և նոյն ժամանակ շատ բարեբար ազդեցութիւն ունէր իր մարդու վրա:

Հանգուցեալ կայսրը, դեռ թագաժառանգ եղած ժամանակ շատ սիրում էր ուսումնականներին, հրապարակասիրներին, առհասարակ մտաւոր կեանքով պարապող մարդկանց հասարակութիւնը: Նրա պալատի մէջ միշտ ազատ մտածողներ էին լրագրագետները և մամուլի աշխատակիցները:

Մի օր մի ազգային հանդիսի ժամանակ, թագաժառանգը մտնում է լրագրական թղթատուներին օթեակին և դիմելով պարոններին, հարցնում է արդեօք յարմար են նրանց նստարանները: Լրագրիչների աշխատակիցները վտահանում են պատասխանել, որ չափ յարմար կերպով սարքված չեն իրանց համար նշանակված տեղերը: Թագաժառանգը անմիջապէս կանչել է տա-

լիս տօնի կարգադրիչներին և մասնացոյց անելով թղթատուներին վրա ասում է. «Չը մտաւ նա, որ այդ պարոնները առաջնակարգ նշանակութիւն ունեն այստեղ, որովհետեւ եթէ նրանք բան չը գրեն հանդիսի մասին, աշխարհն էլ ոչինչ չի իմանայ տեղի ունեցած եղելութեան մասին»:

Թագաժառանգը ամեն առաւօտ կարդում էր սոցիալիստների «Volkszeitung» արմատական թերթը: Մի օր, մի նոր և անորոշ պալատական, փոխանակ յիշեալ թերթը բերելու, բերում է թագաժառանգին մի պաշտօնական լրագիր. թագաժառանգը յետ է դարձնում թերթը և նորից պահանջում է արմատական լրագրի համարը: Շուրջ փոխված պալատական պաշտօնեան բացականչում է. «Սալայն, ձեր բարձրութիւն, դա կատարեալ արմատական, յեղափոխական լրագիր է»: Սրա վրա թագաժառանգը ստանալով թագաժառանգ պատասխանում է. «Փոքր չէ, սիրելիս, ես ինքս անդիմ գիտեմ կառավարութեան մտածողութեան եղանակն ու կերպը, բայց ինձ հետաքրքրում է իմանալ թէ ինչպէս և ինչ են մտածում ուրիշ մարդիկ, որոնք կառավարչական շրջաններին չեն պատկանում»:

Այդ պատասխանը գրաւական էր, որ թագաժառանգը, ժամանակով կայսր դառնալով, կատարեալ ազատութիւն կը տար ժամուկին, քանի որ ինքն հետաքրքրվում էր իմանալ թէ կառավարութեան հակառակ կռակացութիւնը ինչ տեսակ կարծիքներ էր արտայայտում:

Բերում ենք այստեղ հանգուցեալի ներդրումը մտութեան մասին մի գեղեցիկ օրինակ: Մարիէ-Բուրգ քաղաքում պէտք է բացէր Ֆրիդրիխ II թագաւորի արձանը: Կայսր Վիլհելմ, որը հիւանդ էր, ուղարկում է իր որդուն, թագաժառանգին, արձանի բացման հանդիսին ներկայ գտնվելու: Բերլինի ամբողջ լրագրութիւնը անհամբերութեամբ սպասում է հեռագրին, որը պէտք է հաղորդէր բացման հանդիսին թագաժառանգի արտասանած ճառը: Այնուամենայնիւ, բայց հեռագիրը ոչինչ չէ հաղորդում. վերջապէս ստացվում է ճառի կէտը, իսկ վերջապէս թագաժառանգը հեռագրական վարչութիւնը անտես է առնում հաղորդել լրագրիչներին: Բերլինի լրագրագետները յուսահատված են: Ի՞նչ անեն, կիսատ տպւն թագաժառանգի ճառը,—ամօթ է լրագրիչներին, մերում է մի ելք, այդ երեկոյ ամենին չը տպագրել ճառը և սպասել միւս առաւօտեան պաշտօնական թերթի երևալուն... Խմբագիրներից մէկը, որը ուրիշներից հնարագէտ էր, հետեւալ միջոց է գործ դնում. նա ինքն յօդուած է ճառի յարմարաւոր վերջաւորութիւնը և այդպէս լոյս է ընծայում իր թերթը: Հասկանալի է թէ նոյն երեկոյ որքան հաղորդեց ծախվում այդ թերթը, քանի որ նա միակ է լինում, որի մէջ ընթերցողները ամբողջութեամբ տպված են գտնում թագաժառանգի ճառը: Միւս օրը պաշտօնական թերթը երևում է յիշեալ ճառի բոլորովին ուրիշ վերջաւորութեամբ: Թագաժառանգը, Բերլին վերադարձած, կանչում է հնարագէտ խմբագիրին. յանցաւորը դողալով ուղևորվում է դէպի թագաժառանգի պալատը:

Բայց որքան է լինում նրա դարմանը, երբ թագաժառանգը ծիծաղելով է ընդունում նրան և ասում է. «Գիտէ՞ք ինչ, այն վերջաւորութիւնը, որը դուք իմ ճառին կայցրեցիք, աւելի գեղեցիկ էր, քան թէ իմ ասածը. ուրեմն, խնդրում եմ, այլ ես մի ուղղէ՛ք...» Ես ինքս դրանից աւելի լաւ չէի խօսի:

Եւ գերմանացիները, անչուտ, գգում են թէ ինչ ծանր կորուստ են կրել. այդ ազատամիտ մարդը, այդ փիլիսոփայ, այդ ուսումնականը, այդ լուսաւոր, այդ համբերող անհատը, այդ մտածողը, այդ օրինակելի պետական մարդը՝ մեռաւ:

Գերմանիայի ձախտապիւն էր, երկի, որ այն մարդը, որը ազատամիտ յեղափոխութիւն պէտք էր գործէր իր պետութեան մէջ, բարձրացաւ գահը արդէն մեռնողի գրութեան մէջ:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Խաղաղական լրագրիչները հաղորդում են, որ Վիլհելմ II կայսրը ամուսնայ վերջը Վիլհելմ կերթայ: Երկու կայսրները, գերմանական և աստորիականը, միասին այցելութիւն կանեն Հռոմ: Երբ թագաւորին Գիսլոմաթիական աղբիւրներից յայտնի է, որ խաղաղական լրագրիչները տպւելով այդ լուրը, կամենում են իմանալ գերմանական և աստորիական կառավարութիւնների տրամադրութիւնը Խաղաղական վերաբերութեանը Առաջ-

ժամ հաւանական է համարվում միայն այն, որ Վիլհելմ II կայսրը Վիլհելմ կերթայ աշունը: Եւ Ֆրանց-Յոզեֆ կայսրի հետ միասին որսի կերթայ:

—Որպէս մեր ընթերցողներին յայտնի է, դեռ ես հանգուցեալ Ֆրիդրիխ III կայսրի կենդանութեան ժամանակ, պրուսական ներքին գործերի մինիստր Պրուսկամէր հրաժարական տուեց իր պաշտօնից: Այժմ Պրուսկամէրի տեղ պրուսական ներքին գործերի մինիստր է նշանակված Հէրֆուրտ, որը լուրջ կառավարչի համբաւ ունի: Նրան էր յանձնված այն ճառի բնագրի կազմելը, որ պրուսական սէյմի բացվելու ժամանակ կարդաց Վիլհելմ II կայսրը:

—Այսօրվան ամուսնը սկսել է կրկին խօսել իշխանուհի Վիկտորիայի ամուսնութեան մասին իշխան Ալէքսանդր Բատենբերգի հետ: Լօնդօնի մի քանի լրագրիչների տեղեկութիւնները համեմատ, այդ Վիկտորիա կայսրուհին իր աղջիկներով մտադրութիւն ունի աշունը անցկացնել Շոտլանդիայում, և սուգ պահելու ժամանակամիջոցը անցնելուց յետոյ կը կատարվի պսակադրութիւնը համեստ կերպով: Արտաստեղծ այդ տեղեկութիւնները, «Hamburger Correspondent» լրագիրը նկատում է, որ անգլիական լրագրիչները, ըստ երեւոյթի մոտենում են, որ Վիկտորիա իշխանուհին չէ կարող մարդու գնալ առանց գերմանական կայսրի հաւանութեան:

—Եւրոպական լրագրիչները շարունակում են խօսել գերմանական Վիլհելմ II կայսրի Պետերբուրգ գնալու և Գերմանիայի ու Ռուսաստանի մէջ բարեկամական յարաբերութիւնների հաստատելու մասին: Բերլինի մի նշանաւոր լրագրիչ Պետերբուրգից գրում են, որ իբր թէ մեր բարձր շրջաններում ստացած տեղեկութիւնների համեմատ, իշխան Բիսմարկին աջողվել է համոզել Ռուսաստանը վերջնականապէս հրաժարվել Ֆրանսիայի հետ դաշնակցութիւն կապելու քաղաքականութիւնից:

—Մայրաքաղաքի լրագրիչներին Բերլինից հեռագրում են, որ Վիլհելմ II կայսրը ներկայ աշնանը դիտարկութիւն ունի այցելել կայսերական նահանգները, իսկ հոկտեմբեր ամսին Ստրասբուրգ կը գնայ:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Այս տարի լրացաւ ուղիղ 250 տարի այն ժամանակից, երբ առաջին անգամ բերվեցաւ Ռուսաստան չինական թէյն, որի գոյութեան և գործածութեան մասին ուսմանը միայն լսել էին: 1638 թվին, Միխայիլ Ֆեօօրովիչ թագաւորութեան ժամանակ, այդինքան խանութը Ռուսաստան թագաւորին ընծայ էին ուղարկել թէյի 200 փոքր ծրարներ սամուրի հարկը մօրթի փոխարէն: Թէյն դուր եկաւ թագաւորին և բարեհաճութեամբ ընդունեց: 1674 թվին արդէն թէյն համարեալ ոսկու քաշով էր վաճառվում Մոսկվայում: Միայն 1689 թվից, երբ առևտրական դաշնագիր կապեցաւ Չինաստանի հետ, իսկապէս սկսեցաւ թէյի մշտական ներմուծումը Ռուսաստան: Այդպիսով եկող 1889 թվին կը լրանայ 200 տարի այն ժամանակից, երբ սկսեցաւ չինական թէյի մշտական ներմուծումը Ռուսաստան, իսկ Կեայտան հիմնեցաւ աւելի ուշ, այն է 1722 թվին:

«Моск. Вѣдомости» լրագրի թղթակիցը Պարսկաստանում ստիպված էր անձամբ Մոսկվայի «Ա. կամայ բժշկի» ծաղրական դեր խաղալ: Միեանա քաղաքում դիրեկտու ժամանակ քաղաքապետը կառավարիչը (գոյանգար) դուռնաբաց նրան, թէ պէտք է, դուրջ կենալ և միջոցներ գործ դնել թոնաւոր միջատների դէմ: Թղթակիցը գոյանգարին պատասխանեց, որ ինքն, որպէս ճանապարհորդ, ամեն տեսակ հիւանդութեան և միջոցներով թոյնի դէմ անհրաժեշտ դեղեր ունի ճանապարհի համար: Գոյանգարը—ասում է թղթակիցը,—լսելով որ ես դեղեր ունեմ ամեն տեսակ հիւանդութեան դէմ, դնալ և տարածեց այդ ուրախալիլուրը ամբողջ քաղաքում: Հետեւալ օրը զարթեալով ես չէի կարողանում հասկանալ, թէ ինչ ամբողջ է չըմպապտել իմ բնականայնք: Զանկարծ տեսնում եմ, դուք է զայլ ամբողջ գոյանգարը և սկսում է բացատրել ինձ. «Հէքիմ-Սահաբ (պարսի բժիշկ) քաղաքի հիւանդներից ցանկանում են ձեր փրկարար խորհուրդներով օգտվելու պատճին արժանանալ, և այդ հիւանդների մէջ կան այնպիսիները, որոնք կարող են մէկ թոնաւոր տալ (թոնաւոր արժէ 3 ր. 25 Կ.): Զարմանալով, որ գոյանգարը ինձ հէքիմ է անուանում և հիւանդներ է բերել ինձ մօտ, ես մի փոքր բարկացած ասեցի նրան. «Ինչ ինչ բժիշկ եմ, ոչինչ խորհուրդներ չեմ կարող տալ ձեզ և չեմ ուզում ես ձեր թոնաւորները»: Գոյանգարը սառնասիրտ կերպով և առանց չփոխվելու պատասխանեց ինձ. «Չըբէրեցիք երևում է, որ դուք ունեք Ալլախի շնորհը (Պատմութիւն) իմաստութիւնը իւր, վերջապէս, դուք ինքները ասեցիք, որ ոչ միայն ամեն տեսակ հիւանդութիւնների դէմ դեղեր ունեք, այլ միջոցներով դեղաթափել էլ ունեք: Ուրեմն այդպիսի

սի մարդը չէ կարող բժիշկ չը լինել: Հետեւաբար, ինչու չէք կամենում օգնութեան ձեռք մեկնել այս թշուառներին»: Տեսնելով, որ դժուար է մի բան հասկացնել գոյանգարին, վերկացայ և դուրս եկայ ոնենակից, անձամբ բացատրելու հիւանդներին, որ ես բժիշկ չեմ: Հէքիմ որ մօտեցայ հիւանդների շրջանին, աչքիս առաջ ներկայացաւ հետեւալ պատկերը. մէկը աչքացաւ ունեք, միւսի դէմքը ալանդակվել էր խլացաւից, մի խօսքով ամեն տեսակ հիւանդութիւններով վարակված մարդիկ տեսայ այնտեղ: Հէքիմ որ տեսնում ինձ, նրանք միաձայն հառաչանք բարձրացրին ասելով. «Հէքիմ-սահաբ, բէ ֆէրեադէ մա բէրէս (պարոն բժիշկ, ականջ դիր մեր հառաչանքներին)»: Խոստովանում եմ, այդ տեսարանը ինձ վրա խորը տպաւորութիւն գործեց, և այդ գոյանգարին չէ, երբ մարդ կանոնաւոր բժշկութեան քաջակալութեան շնորհով տեսնում է տանջվող հիւանդներին և ինքն չէ կարողանում օգնութեան ձեռք մեկնել նրանց: Իսկ տեղական բժշկութիւնը խոտերով շատ քիչ օգուտ է բերում (այստեղի բժշկութեան մասին հասկացողութիւն կազմելու համար բաւական է յիշել, որ այստեղ բժշկութեամբ պարապում են դաշնակցները, հրէայ մանրակաշառները և ծեր մարդիկ: Եւ այդպիսի տեսարանների կարելի է հանդիպել Պարսկաստանում, Թուրքմէնիայում, Աֆղանիստանում և Իրակ-Արաբում: Պատասխանելով հիւանդներին, ասեցի թէ ես չափ ցաւում եմ, որ չեմ կարող օգնել նրանց, և խնդրում եմ Ալլահից առողջութիւն նրանց ցաւերին:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՄՆԱՍՏԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՑ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 27 յունիս: Ֆինլանդիայից հաղորդում են, որ երեկոյեան, յունիսի 24-ին, Հէլսինկի քաղաքի մօտ Կաթո ծովածոցում գտնվող «Паревна» կայսերական նաւը ֆին ժողովրդի ողբերկով ցոյցերի աւարկայ էր. չորհրդակեր, նաւերի և նաւակների մէջ նստած հազարաւոր մարդիկ գալիս էին տեսնելու և ողջութեամբ թաղաւորելու և Թագուհուն: Երբ Նոյցա Մեծութիւնները դուրս եկան նաւի տախտակամածի վրա, ժողովուրդն սկսեց ողբերկով կերպով «ուրա» կանչել: «Паревна» նաւը մտաւ ֆինլանդի երկրի-ուսանողների խումբը, և Նոյցա Մեծութիւնների առաջ մի քանի երգեր երգեց: Նոյցա Մեծութիւններին մատուցին գիւղացիների ձեռքով ժողոված դաշտային ծաղիկներից կազմված անթիւ փունջեր, որպէս հաւատարմի հպատակութեան նշան: Մօտ 11 ժամին հասարակութիւնը հեռացաւ պլիսարկները հանելով և հրաժարական ողջին ուղարկելով կայսերական նաւին Գիշերը գեղեցիկ էր, ծովածոցի ափի վրա բազմաթիւ ճրագներ էին վառվում:

ԲԵՐԼԻՆ, 27 յունիս: Կ. Պօլսից ստացված մասնաւոր տեղեկութիւնների համեմատ, թիւրքաց զօրաբանի հրամանատարը Երզրուսում՝ Նուրէտ-փաշա իբր թէ հեռագրել է սուլթանին, որ եթէ ինքն Նուրէտ-փաշա, իր սպայները և զինուորները չեն ստանալ իրանց ուժերին, այն ժամանակ Ռուսաստան կը փախչէ: Այդ պատճառով հրամայված էր Նուրէտ-փաշային Բաղդադ տեղափոխել, բայց փաշան չը կատարեց հրամանը և դրա համար սուլթանի աղիւստնոր կալանաւորեց նրան և տարաւ Երզրուսից:

ՖԻՆԼԱՆԴԻԱ, 27 յունիս: (Քյէլեի գործակալութիւնից): Յուլիսի 8-ի (նոր տօմարով) նախընթաց երեկոյեան 50 մարդուց բաղկացած աւազակախումբը շրջապատեց երկաթուղիական Բէլոյի կայարանը Արենդհան Ռուսկիայում և ապա յետ քաշվեց, տանելով իր հետ երկաթուղու վրա ծառայող երկու աւատորացիներին և էլի չորս մարդկանց: Զօրքեր են ուղարկված հալածելու աւազակախումբը:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 28 յունիս: Լէյպցիգից լրագրիչներին հեռագրում են, որ կայսերական բարձրագոյն դատարանը որոշեց, որ «Նոբել եղբայրների» ֆիրմա ունեցող նաւթարդիւնաբերական ընկերութիւնը իրաւունք չունի հանել կործանեան հարկ այն ակցիաների շահաբաժնից, որոնք տէրերը մշտապէս բնակվում են Ռուսաստանից դուրս:

ՄՈՍԿՎԱ, 28 յունիս: Ի. Սուշկինի անուն կը բողոքարար քաղաքային բանկի անանկութեան վերաբերեալ գործը կը քննի սեպտեմբերին նախագահական դատարանում: Մեղադրվածները ութ հոգի են:

ՎԻՍՏՐԱՎԵՆ, 28 յունիս: Երբ իշխան Ալէքսանդր Բատենբերգը կառավարում էր, ձիւրը կատարեցան և, սկսեցին վազել դէպի Լեւանտոտորում, և ընկան անդունդը: Խլիւրդը, 40 ֆուտ խորութեան մէջ ընկնելուց յետոյ, ձեռքով բռնեց մի թուի, և միայն թիթի վերքեր ստա-

ցաւ: Գիմարի եպիսկոպոսը կրկին զնայ այստեղից, որովհետեւ չհղուեցաւ Սերբիական թաղուհու մօտ: Կախկոպութեամբ երկու նամակ գրեց թաղուհու մօրաքրոջը, իշխանուհու Մարգարիտին, վերջինը այսօր զնայ Ֆրանկ-Ֆուրտ Մայիսի վրա, ուստայ ընդհանուր հիւպատոսի հետ խորհրդակցելու համար:

ՓԱՐԻՋ, 28 յունիսի: Ռուսաց զեապան Մորէն-դէյմ շարաթ օր Վիլլեր-Սիւր-Միլը ժամանեց, ուր ցոյցեր արին նրան ի պատիւ Ռուսաստանի: Երէկ Մարտէլում կայացած բողոքի միախմբի ժամանակ տասնիկ կուի սկսվեց, որի ժամանակ ներկայ եղողներէն շատերը ծանր վէրքեր ստացան իջնում հասարակութիւնը սուղելով սկսեց ծաղրել Բուլանժէին:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 28 յունիսի: Հրատարակված է պետական խորհրդի որոշումը՝ տարեկան 35,000 ռուբլ նշանակելու մասին տնային արդիւնագործութիւնը կատարելագործելու և խրախուսելու համար: Հրատարակված է 25 ռուբլիանոց նոր ձևի թղթադրամի նկարագրութիւնը: Թղթադրամը տպված է սպիտակ թղթի վրա:

ՎԻԷՆՆԱ, 28 յունիսի: Նատալիա թագուհին մերժեց սինդի առաջարկութիւնները, և այդ պատճառով սինդը շտապով կը վճռէ այդ ամուսնութեան խղճումը: Յոյս են տածում, որ թագուհին կը փոխէ իր դիտարկութիւնը և կընդունէ սինդի առաջարկած համաձայնութիւնը: Թագուհոր պատրաստակամութիւնը է յայտնում վճարել թագուհուն տարեկան 300,000 ֆրանկ և թողնել նրա մօտ թագաժառանգին մինչև 1892 թիւը: Թագուհին միայն պէտք է պարտաւորվի Բէլգիայի չը դալ: Եթէ թագուհին կընդունէ այդ պայմանները, այն ժամանակ թագուհոր յետ կը վերցնէ ապահարկանի մասին իր տուած յայտարարութիւնը:

ԴԱՐՄՇԱՍ, 28 յունիսի: Իշխան Ալեքսանդր Բատենբերգ ընկնելու ժամանակ մեծացեց իր ողնաշարը:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՈՍԱ
Յունիսի 28-ին

Լօնդոնի վրա 10 ֆունտ արծէ. . .	105 ր. —
Համբուրգի վրա 100 մարկ — . .	51 > 60
Փարիզի վրա 100 ֆրանկ — . .	41 > 35
Սանկտ — արծէ. . .	8 > 40
Մարսայի կուպոններ — . .	167 > 75
Արժամ — . .	1 > 33
Բորսայի գիւլոններ — . .	60/0 71/4/0
Պետակ. բանկ. 50/0 տոմս 1-ին շրջանի	98 > 75
— 2-րդ —	98 > 75

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՑԻՆ ԱՐՀԵՍՏԱՌՈՐԱՑ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՈՒՄ՝ նորեկների ընկերութիւնները և աշակերտների վերաբնակութիւնները կը լինեն օգոստոսի 26-ին և 27-ին: Առաջին դասատուն մանուկներից պահանջվում է, որ նրանք իմանան տարրական ուսումնարաններում աւանդվող առարկաները: Նորեկների տարիքը պէտք է լինի ոչ պակաս քան 13 1/2 և ոչ աւել քան 18 տարեկան և մի և նոյն ժամանակ ամուր կազմուածք պէտք է ունենան, խնդրները դոկումենտների հետ (կոնսիտորիայից տուած մետրիկական վկայական և ծաղիկ կտրելու վկայական) ընդունվում են ուսումնարանի գրասենեակում յուլիսի 1-ից մինչև 15-ը և օգոստոսի 22-ից մինչև 26, ամեն օր առաւօտեան 10-ից մինչև 12 ժամը:

1—3

Societa Generale italiana di Navigazione.

117 ԱՌԱՋՆԱԿԱՐԳ ՄԵՐ ՇՈՒԿԵԱԿԵՐ ՈՒՆԵՑՈՂ

ԻՏԱԼԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԱԽԳԻՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

Կանոնաւոր երթևեկութիւն Բաթումի և Եւրօպայի Աֆրիկայի, Ասիայի ու Ամերիկայի բոլոր գլխաւոր նաւահանգիստների մէջ: Շոգենաւերը Բաթումից դուրս են դալիս կանոնաւորապէս ամեն շաբաթ:

1,500 տոննա ունեցող շոգենաւերը Բաթումից դուրս են դալիս ամեն երեքշաբթի օր դէպի Անատոլիայի բոլոր դժերը և Կ. Պոլիս:

Բոլոր տեղեկութիւնների մասին (թէ ծանապարհորդների և թէ ապրանքների մասին) դիմել ընկերութեան գործակալ Ի. Ե. ՉԵՐՐՈՒՍԻՆԻ ԹԻՖԼԻՍՈՒՄ—Գօլօվինսկի պրօսպ. № 34 և ԲԱԹՈՒՄՈՒՄ—Իշխ. Գուրիէլի տանը:

2—40

Որովհետեւ այս տարի աշնանը և ձմեռանը պիտի հրատարակվեն «ՆԱՍԻՍՏՐԻՔԻ» երրորդ և հորրորդ գրքերը, ուստի յայտնում եմ այն յարգելի անձանց, որոնք բաժանորդ են գրվել «ՆԱՍԻՍՏՐԻՔԻ» համար, յայտնել իրանց նոր հասցէն, եթէ մի դիւղից կամ քաղաքից տեղափոխվել են Իս Իս հասցէն. Шугаевъ, (черезъ Вѣдый-Ключъ) Архангу Мерабьянъ.

Արշակ Մերաբեան

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET COM.
ՅԻՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԽԳԻՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
Ն. ՊԱԿԵ ԵՒ ԸՆԿ.

Կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԵԼԻ և ԲԱԹՈՒՄԻ մէջ և փոխադարձ.

Հինգշաբթի, յուլիսի 7-ին, ԳԱՍԼԻԱ (LA GAULE) շոգենաւը, նաւապետ ԳԱՐԻԳ (GARRIGUES) դուրս կը դնայ Բաթումից դէպի Տրապիզոն, Օրդու, Սամսոն, Կ. Պոլիս և Մարսէյլ: Տեղեկութիւնների մասին պէտք է դիմել ընկերութեան գործակալներին. Բաթումում՝ Լէմիօղլուի տան, Նարեքէֆայա, և Թիֆլիսում՝ Նախկին Արշերունի զաւլերէում, № 103:

3—3

ВЫСОЧАЙШЕ УТВЕРЖДЕННОЕ
Российское Общество Застрахованія капиталовъ и доходовъ

УТВЕРЖД. ВЪ 1835 ГОДУ

ԲԱՐՁՐԱԳՈՐԷ ՀԱՍՏԱՏՎԱԾ

Ռուսաց ընկերութիւն կապիտալների և եկամուտների ապահովութեան

հիմնված 1835 թվին

Ամենահին և միակ ուսաց ընկերութիւն, որը բացառապէս պարապում է կեանքի (կապիտալների և եկամուտների) ապահովութեան գործով, փոխադարձութեան սկզբունքների վրա:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐԱՄԱԳՆՈՒԹ 8,000,000 ՐՈՒԲԼԻ

- Կապիտալների ապահովութիւնը ժԱՌԱՆԳՈՒԹԵԱՆ համար, ապահովացնողի մասուն դէպքում
- Կապիտալների ապահովութիւնը ԾԵՐՈՒԹԻՒՆԸ և երկնանների համար ԲԱԹՈՒՄԻՔԸ ապահովացնելու համար:
- Եկամուտների և ցմահ նշանակվող թոշակների ապահովութիւնը:
Տարիներից և մանրամասն տեղեկութիւնները ուղարկվում են անվարձ ԳԼԽԱՌՈՐ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵԱՆ կողմից, որը դառնում է Թիֆլիսում, Վիլամինովսկայա փողոց, տուն № 24:
Գլխաւոր Ագէնտ և Տնօրէն Կովալսեան երկրի համար՝ Ն. Ն. ԳՐՈՒՋԻՆԵՐԻԳ:

ՊԱՆԱՆՉՎՈՒՄ ԵՆ ԱԳԻՆՏՆԵՐ ԵՒ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐ
Թիֆլիսի և կովկասեան ուրիշ քաղաքների համար: 10—32 (Հ)

ԿԵՐՈՍԻՆԻ ՊԱՀԵՍՏ ՄԵՐ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ

ԴԵՊՕ ԼԱՄՊԱՆԵՐԻ, ՊԱՍՏԱՌՆԵՐԻ ԵՒ ՄԷԲԷԼԻ

Ե. Ա. ԾԱՏՈՒՐԵԱՆՑԻ

Գտնվում է Վոկզալի մօտ, Կասպեան-Սև-ծովի նաւթաղիւնագործական ընկերութեան պահեստում, նախկին Կարովելովի

ԿԵՐՈՍԻՆԻ ԵՒ ՄԱՋՈՒՏԻ ՎԱՋԱՌՈՒՄՆ ՄԵՐ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ
13—25 (Հ)

ЗУБНЫЯ СРЕДСТВА А. ШТЕХЕРЪ
ПОДОЛЬСКІЯ ЗУБНЫЯ КАПЛИ
КОРОБКА 50 К. 80 К.
ГИГИЕНИЧЕСКІЙ КОКАИНОВЫЙ
ЗУБНОЙ ЭЛИКСИРЪ
БОЛШАЯ ФЛАКОНЪ 80 К.
ГИГИЕНИЧЕСКІЙ ЗУБ. ПОРОШОКЪ
КОРОБКА 30 К.
СКЛАДЪ ВО ВСЯХЪ АПТЕКАХЪ И АПТЕК. МАГАЗ.

ՊՐՈԳՆՈՐ Ա. ՇՏԷԻԼԵՐԻ ՄԻՋՈՑՆԵՐԸ

ԱՏԱՄԵՐԻ ՑԱԽԻ ԵՒ ՓՁԱՆԱԼՈՐ ԴԵՄ

ՊՐՈԳՆՈՐ ԱՏԱՄՆԱԴԵՐ ԿԱԹԻՆԵՐ 80 ԿՈՊ.

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԿՈՎԱՑԻՆԵԱՆ ԱՏԱՄՆԱՑԻ ԷԼԻԿ.

ՍԻՐ 80 ԿՈՊ.

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԱՏԱՄՆԱՑԻ ՓՈՇԵ 30 ԿՈՊ.

ԳԼԽԱՌՈՐ ՊԱՀԵՍՏ. ԹԻՖԼԻՍՈՒՄ՝ Կովկասեան ղեղավաճառատան, և պ. պ. Շահպարտեանցի, Մակկէրի, Սէնչիկովսկու և Ալեքսանդրի ղեղատներում: ԲԱԹՈՒՄԻ մէջ՝ Բէկկէրի մօտ, ԳՈՒԹԱՑԻՍՈՒՄ՝ Կոկոշեկի մօտ, ՍՏԱՎՐՈՊՈԼՈՒՄ Բորիսոցկու մօտ և ԵԿԱՏԵՐԻՆՈՎԱՐՈՒՄ:

(Հ.)

НѢМЕЦКАЯ ГОСТИННИЦА

ВЪ ВАРШАВѢ

31. Длугая улица 31.

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՀԻՒՐԱՆՈՑ

ՎԱՐՇԱՎԱՑՈՒՄ, Դուրապա փողոց, 31. Գտնվում է քաղաքի նոյն իսկ ԱՌԵՏԻՐԱԿԱՆ կենտրոնում, ԹԱՐՈՆԵՐԻ և բոլոր ՊԱՇՏՈՆԱՑՆԵՐԻ կողքին: 90 սենեակներ, շքեղ կերպով յարմարեցրած, 30 կոպէկից մինչև 3 ռուբլի օրական վարձով:

ԿՈՆԴԻՏԵՐԻԱ և ԲԵՍՏՈՐԱՆ

ձաշեր 30 կոպէկից մինչև 1 ռուբլի:

ՕՄՆԻԲՈՒՆԵՐ և ԿԱՌՔԵՐ երկաթուղու բոլոր գնացքների համար:

ԿԱՌՔԵՐԻ վարձը չափաւոր գներով:

(Հ)

ԲԱԹՈՒՄԻ «ԿԱՍՊԵԱՆ ԳՐԱՎԱՋԱՌԱՆՈՑԸ» ընդունում է ամեն տեսակ գրքեր կոմիսիայով վաճառելու համար,

Հասցէն. БАКУ, „Каспійская Книжная Торговля“ Седрагу Тараянцу.

15—15 (Հ)

Պարապելով ԼԵՀԱՍՏԱՆԻ ՀԱՅԵՐԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆՈՎ, խնդրում եմ այդ հարցի հետ ծանօթ անձերին յայտնել ինձ թէ ինչ ձեռագիր կամ տպած աղբիւրներ և հետազոտութիւններ (ամբողջ գրքեր թէ փոքրիկ յօդուածներ պարբերական թերթերի մէջ, եւրօպական թէ ասիական լեզուներով, թարգմանութիւն թէ ինքնուրոյն) յայտնի են նրանց այդ հայ գաղթականների մասին, Հասցէն՝ Тифлисъ, Сергіевская ул., իսկ սեպտեմբերին վարչակալի համալսարան:

Ս. Լիսիցեանց

2—10